

Հաստատված է՝  
Նովոսելցովո համայնքի ավագանու  
« 02 » 09 2010թ. թիվ 18 նիստով

Գյուղապետ *Ռ. Դավոյան* Ռ. Դավոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՆՈՎՈՍԵԼՇՈՎՈ ՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ

ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՅՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2010-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Գ>Նովոսելցովո 2010թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները
6. *Հավելված 1.* Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:
7. *Հավելված 2.* Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

# 1. Պատմական ակնարկ

Նովոսելցովո գյուղը կազմավորվել է 1913 թ. ռուս մեծահարուստ Նովոսելցովո ազգանվամբ անձի կողմից, որը 1840 – ական թվականներին մի խումբ արքայալների հետ, որոնք մոլոկաններ էին արքայվել են Յարական Ռուսաստանից այն պատճառով, որ իրենց հավատը չի համընկել իշխանության քաղաքականությանը: Նա Վարանցովկայից մի քանի ռուս ընտանիքների հետ տեղափոխվել է դեպի հարթավայր անասնապահությամբ զբաղվելու և հիմնադրել են այսօրվա Նովոսելցովո գյուղը:

Գյուղը տեղակայված է ճահճային տեղանքում, ծովի մակարդակից բարձրությունը 1475 մ է,

Շրջապատված է ձորերով, որոնցով հոսող ջրերը, գեղատեսիլ բնությունը ամռանը հանգստանալու լավ պայմաններ են ստեղծում:

Գյուղն ունի խմելու ջրի մեծ պաշարներ, 1968 թ. խմելու ջուր է մատակարարում Վանաձոր քաղաքին :

Մինչև մայրուղի հեռավորությունը 4 կմ է, օդանավակայանից 7-8 կմ, մայրաքաղաքից 160 կմ է:

Կլիման ձմեռը ցրտաշունչ է, ձյունառատ, ամառը՝ զով:

## 2. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տնտեսությունների քանակը	62
Այդ թվում առկա	56
Համայնքի առկա բնակիչների թիվը կազմում է	202 մարդ
Որից	
1. Տղամարդիկ	98
2. Երեխաներ 0-6տ	6
3. Դպրոցական 6-16տ	22
4. 16-62 տարեկան	154
5. Աշխատունակներ	140
6. Թոշակառուներ	21
7. Հաշվանդամներ	4
8. միակողմանի ծնողազուրկ երեխաներ	7
9. նպաստառուներ	5 ընտանիք
10. Զոհվածների ընտանիքներ	2 ընտանիք

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԵՐ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ և ավագանու կողմից, Որոնք ընտրվում են չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ Հետևյալ կառուցվածքով

Թիվ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային Միավորների Քանակը/դրույք/	Ամսական Պաշտոնական Դրույք/դրամ/	Տարեկան Աշխատավարձի Ֆոնդ/դրամ/
1.	Ղեկավար	1	86000	1075.0
2.	Քարտուղար	1	74000	925.0
3	Առաջատար մասնագետ	1	72000	900.0
4.	տեխնիկական			
5.	աշխատող	1	38.300	478.1
	Ընդամենը՝	4	270300	

Ամբողջ ապարատը բաղկացած է 5 աշխատողից:

Ավագանին կազմված է 4 մարդուց:

Նախնորական ելույթներում գյուղապետը խոստումներ է տվել ընտրողներին՝ սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, խմելու ջրի պրոբլեմի հիմնովին լուծման համար, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել կրթական և բուժ. Կետի գործունեությամբ բարելավմանը: Սակայն նշված աշխատանքները իրականացնելու համար գյուղապետարանը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ, ուստի պետք է համագործաբցել տեղական և միջազգային կազմակերպությունների, այլ ներդրողների հետ՝ լուծելու համայնքի սոցիալ – տնտեսական խնդիրները:

ՏՐՉՁԱԿ

## Շրջակա միջավայրի պահպանություն

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով մոտ 5% - ով: Այդ պատճառով աղբը Կուտակվում է մայթերին և նեղ փողոցները դառնում են անանցանելի ու անբարեկարգ: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով: Ցածր հզորության մղիչ Պումպի առկայությունը չի թույլատրում ապահովել շուրջօրյա ջրամատակարարում, չնայած խմելու ջրի բնական մեծ պաշարների առկայությանը:

## Հողատարածքների օգտագործում

Վարելահող	- 115.2 հա
Խոտհարք /գյուղամերձ/	- 233 հա
Արոտավայրեր /գյուղամերձ/	- 269 հա
Հնդավոր բազմամյա տնկարկներ	- 2 հա
Տնամերձ հողեր	- 22.0
Անօգտագործելի հողեր	- 123.9
Դաշտային ճանապարհներ	- 1.08
Մեկ հողաբաշնի չափը	- 3.7

Համայնքում առկա վարելահողերը պիտանի չեն գյուղմթերքների արտադրություն կազմակերպելու համար: Վարելահողերը օգտագործվում են որպես խոտհարկներ:

Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, արտադրվում է կաթ, միս, ձու: Խոտի պաշարները բավարարում են նաև երկար մուրային շրջանի կազմակերպմանը:

## Կրթություն

Գյուղում կա դպրոցի կիսաքանդ շենք, որը չի գործում /1998թ. գրուղը ունեցել է դպրոց/, երեխաները հաճախում են Սարատովկա գյուղի դպրոցը, ձմռան ամիսներին ճանապարհները փակվում են: Աշակերտներին դպրոց տեղափոխելու ծախսերը հոգում է գյուղապետարանը, յուրաքանչյուր տարի մոտ 700-900 հազար դրամ: Գյուղում չկա մսուր-մանկապարտեզ:

## Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքը չունի մշակույթի տուն, որի պատճառով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից: Գործող գրադարանն ունի 3015 անուն գիրք, այն տեղակայված է գյուղապետարանի վարչական շենքում: Չկա սպորտ հրապարակ:

## Առողջապահություն

Գրուղում գործում է բուժ-կետ, ունի վերանորոգման կարիք , չկա համապատասխան գույք և սարքավերուժներ: Բուժ-կետն ունի մեկ աշխատող:

## Համայնքի ուժեղ կողմերը

1. Երևան մայրուղուց մինչև գյուղ կենտրոնական ճանապարհը բարվոք վիճակում է:
2. Շրջապատված է լճերով, հանքային առերով, հարուստ է բնական ջրի մեծ պաշարներով:
3. Հանգստի գոտի ստեղծելու պայմաններ կան:
4. Ունի ջրային ավազահանք:
5. Չկնաբուծություն զարգացնելու նախապայմանները առկա են:

## Համայնքի թույլ կողմերը

1. Ճանապարհների և գյուղամիջյա ճանապարհների անմխիթար վիճակը
2. Ծնելիության նվազում, կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
3. Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
4. Հողերի ոչ պիտանելիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում
5. Հասարակական տրանսպորտային միջոցների բացակայությունը
6. Կրթական ցածր մակարդակը

## Համայնքի զարգացման քառամյա ծրագրի ցուցանիշները

### 1. *Խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգում*

- ընդհանուր արժեքը - 25000.0 հազ.դրամ
- համայնքի ներդրումային մաս - 2500.0 հազ.դրամ
- սոց. հիմնադրամ ծրագրի կողմից - 22500.0 հազ. դրամ

### 2. *Համայնքի ներքին ցանցի գազաֆիկացում*

- ընդհանուր արժեքը - 74 000 000 դրամ
- համայնքի ներդրումային մաս - 2 500 000 դրամ
- սոց. հիմնադրամ ծրագրի կողմից - 2 500 000 դրամ

### 3. *Դպրոցի շենքի և մանկապարտեզի կառուցում*

- ընդհանուր արժեքը - 14000.0 հազ. դրամ
- համայնքի ներդրումային մաս - 1400.0 հազ. դրամ
- ակնկալվում է դոնոր կազմակերպությունների մասնակցություն - 12600.0 հազ դրամ

4. *Դպրոցահասակ երեխաներին Սարատովկայի միջն. դպրոց տեղափոխելու ծրագիր*

- ընդհանուր արժեքը - 720.00 հազ. դրամ
- համայնքի ներդրումային մաս - 900.0 հազ.դրամ

5. *Գյուղից մայրուղի ճանապարհի վերանորոգում*

- ընդհանուր արժեքը - 450.0 հազ. դրամ
- համայնքի ներդրումային մաս - 1050.0 հազ. դրամ

**Համայնքին սպառնացող վտանգները**

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտություն
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեյի կատարմանը
- Ճահճային հողերի չորացում, առանց որի անհնար է համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Դպրոցի կառուցում, կրթական մակարդակի բարձրացում